



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 11

Հունվար 2011

Պետական գնումներ

Գնումների գործիքները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Շրջանակային համաձայնագրեր
- Էլեկտրոնային աճուրդներ
- Գնումների դինամիկ համակարգեր



www.sigmaweb.org

This document has been produced with the financial assistance of the European Union. The views expressed herein can in no way be taken to reflect the official opinion of the European Union, and do not necessarily reflect the views of the OECD and its member countries or of beneficiary countries participating in the SIGMA programme.

Անդամ երկրներն ունեն հնարավորություն որոշելու՝ արդյոք կիրարկել դրույթները, որոնք թույլատրում են երեք հատուկ տեսակի գնումների գործիքների օգտագործումը, թե ոչ. դրանք են՝ շրջանակային համաձայնագրերը, էլեկտրոնային աճուրդները և գնումների դինամիկ համակարգերը:

Այս գնումների գործիքներից յուրաքանչյուրը օգտագործվում էր հիմնական մրցակցային ընթացակարգերի կիրառման ժամանակ՝ որպես սկզբնական՝ հաջորդող գնումների գործընթացի համար:

Ինչ է շրջանակային համաձայնագիրը:

“Շրջանակային” հասկացությունը կարող է օգտագործվել՝ նկարագրելու մի շարք առևտրային և գնումների կարգեր: Այնուամենայնիվ, Հրահանգը տալիս է “շրջանակային համաձայնագրի” հատուկ սահմանումը.

“մեկ կամ ավելի պետական պատվիրատուների և մեկ կամ ավելի մասնակիցների միջև համաձայնագիր, որի նպատակն է սահմանել այն պայմանները, որոնց հիման վրա շնորհվում է պայմանագիրը՝ կապված գնի, և անհրաժեշտության դեպքում, քանակի հետ”:

Այլ խոսքերով, շրջանակային համաձայնագիրը ընդհանուր հասկացություն է, որոնցով սահմանվում են այն պայմաններն ու հանգամանքները, որոնց ներքո մասնակիցներից կատարվելու են որոշ գնումներ: Շրջանակային համաձայնագրի առավելությունն այն է, որ այն սկզբում հայտարարվում է Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում (ԵՄՊՏ) և դրա շրջանակներում գնումներ կատարելու դեպքում չկա նոր մրցակցային ընթացակարգ կազմակերու անհրաժեշտություն:

Ու՞վ կարող է կնքել շրջանակային համաձայնագիր:

Շրջանակային համաձայնագիրը կարող է կնքվել.


- պետական պատվիրատուի կողմից,
- պետական պատվիրատուի կողմից, որը գործում է մի քանի պետական պատվիրատուների անունից,
- գնումների կենտրոնական մարմնի կողմից, որը գործում է իր կամ մի քանի պետական պատվիրատուների անունից:

Եթե շրջանակային համաձայնագիրը կնքվում է՝ օժանդակելու մի քանի պետական պատվիրատուների համար, ապա, թափանցիկության սկզբունքը բավարարելու համար, ԵՄՊՏ-ում պայմանագրի ծանուցումը պետք է հստակորեն նշի այն պետական պատվիրատուներին, որոնք շրջանակային համաձայնագրի մասնակից են: Պետական պատվիրատուները, որոնք շրջանակային համաձայնագրի մասնակիցներ են, մնում են անփոփոխ շրջանակային համաձայնագրի գործողության ընթացքում և, հետևաբար, նոր պատվիրատուներ չեն կարող միանալ համաձայնագրին դրա ստեղծումից հետո:




Որոշ օրինակներ, թե ինչպես կարող են կնքվել շրջանակային համաձայնագրերը


Մեկ մասնակցով շրջանակային համաձայնագիր՝ մեկ պետական պատվիրատուի և մեկ մասնակցի միջև




Մեկ մասնակցով շրջանակային համաձայնագիր՝ մի քանի պետական պատվիրատուների և մեկ մասնակցի միջև՝



Բազմաթիվ մասնակիցներով շրջանակային համաձայնագիր՝ մեկ պետական պատվիրատուի և բազմաթիվ մասնակիցների միջև




Բազմաթիվ մասնակիցներով շրջանակային համաձայնագիր՝ մի քանի պետական պատվիրատուների և բազմաթիվ մասնակիցների միջև



Բազմաթիվ մասնակիցներով շրջանակային համաձայնագիր՝ մի քանի պետական պատվիրատուների անունից գործող գնումների կենտրոնական մարմնի և բազմաթիվ մասնակիցների միջև

⊙ = Պետական պատվիրատու



Կա± արդյոք շրջանակային համաձայնագրերին մասնակցող մասնակիցների թվի սահմանափակում:

Եթե շրջանակային համաձայնագիրը պետք է լինի մի քանի մասնակիցների հետ, ապա ԵՄՊՏ պայմանագրի ծանուցման մեջ պետք է նշվի նախատեսված քանակ կամ առավելագույն քանակ: Մի քանի մասնակիցներ ներառող շրջանակային համաձայնագրի համար մասնակիցների նվազագույն քանակը երեքն է, պայմանով, որ կան երեք համապատասխան որակավորում ունեցող մասնակիցներ: Շրջանակային համաձայնագրում մասնակցող մասնակիցների առավելագույն քանակի՝ օրենքով սահմանված սահմանափակում չկա՝ չնայած գործնականում նպատակահարմար է սահմանափակել մասնակիցների քանակը, որպեսզի, օրինակ, փոքրարժեք գնումների չլինեն չափազանց շատ մասնակիցներ:

Պետական պատվիրատուները, որոնք շրջանակային համաձայնագրի մասնակիցներ են, մնում են անփոփոխ շրջանակային համաձայնագրի գործողության ընթացքում: Նոր պետական պատվիրատուներ չեն կարող միանալ համաձայնագրին դրա ստեղծումից հետո:

Կարո՞ւք են համաձայնագրերն օգտագործվել բոլոր գնումների համար:

Համաձայնագրերը կարող են կիրառելի չլինել բոլոր տեսակի գնումների համար և պետական պատվիրատուն պետք է համոզված լինի, որ համաձայնագիրը կապահովի գնման խնայող և արդյունավետ միջոցներ: Համաձայնագրի ամենահարմար օգտագործումն այն է, երբ պետական պատվիրատուն ունի ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կրկնվող պահանջ, սակայն հայտնի չէ դրանց ճշգրիտ քանակը:

Պետական պատվիրատուն պետք է ունակ լինի ղեկավարել շրջանակային համաձայնագիրը, քանի որ և՛ պետական պատվիրատուի կամ պետական պատվիրատուների, և՛ մասնակցի (ների) պահանջները պետք է բավարարվեն և շրջանակային համաձայնագրի գործարկումը պետք է մանրամասն հսկվի:

Պետք է նաև միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու, որ շրջանակային համաձայնագրերը չստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք կսահմանափակեն մրցակցությունը և որ դրանք չեն կիրառվի ոչ պատշաճ ձևով:

Ե±րբ պետք է հայտարարվի շրջանակային համաձայնագիրը ԵՄՊՏ-ում:

Շրջանակային համաձայնագիրը հայտարարվում է՝ օգտագործելով պայմանագրի ծանուցումը ԵՄՊՏ-ում, եթե համաձայնագրի համաձայն բոլոր կատարվելիք գնումների նախահաշվային արժեքը գերազանցում է ԵՄ համապատասխան շեմը՝ սովյալ տեսակի պայմանագրի համար: Պայմանագրի ծանուցումը հայտարարվում է գործընթացի սկզբում՝ շրջանակային համաձայնագիրը ստեղծելու համար:

Ի՞նչ ընթացակարգ է օգտագործվում շրջանակային համաձայնագրի գնման համար:

Չորս հիմնական մրցակցային ընթացակարգերից յուրաքանչյուրը կարող է կիրառվել շրջանակային համաձայնագրի կնքման համար, չնայած ավելի հաճախ օգտագործվում են բաց և սահմանափակ ընթացակարգերը:

Միայն այն դեպքում, երբ պայմանագրերը շնորհվում են շրջանակային համաձայնագրի հիման վրա, կիրառվում են տարբեր, շրջանակային համաձայնագրին հատուկ դրույթները: Պետք է նշել, որ շրջանակային համաձայնագիրը ընտրված մասնակիցների ցանկ չէ, որոնք ունեն որակավորում՝ իրականացնելու համաձայնագրով նախատեսված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը: Շրջանակային համաձայնագիր կնքելու համար մասնակիցները պետք է ունենան որակավորված և ներկայացված հայտեր, որոնք գնահատվում են պետական պատվիրատուի կողմից և սրանք այն հայտերն են, որոնք հիմք են հանդիսանալու շրջանակային համաձայնագրերի հիման վրա շնորհումներ անելու համար:

Կա՞նք արդյոք շրջանակային համաձայնագրի ժամկետի սահմանափակում:

Այո, շրջանակային համաձայնագրի ժամկետը հիմնականում չի կարող գերազանցել չորս տարին: Այն կարող է չորս տարին գերազանցել միայն պատշաճ կերպով հիմնավորված բացառիկ դեպքերում, մասնավորապես՝ շրջանակային համաձայնագրի առարկայի հետ կապված:

Ինչպե՞ս են շնորհվում պայմանագրերը շրջանակային համաձայնագրի համաձայն:

Մեկ մասնակցի հետ համաձայնագիր. Եթե շրջանակային համաձայնագիրը կնքված է մեկ մասնակցի հետ, պայմանագիրը շնորհվում է շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանների սահմաններում: Պետական պատվիրատուն անհրաժեշտության դեպքում կարող է մասնակցից պահանջել լրացնել իր հայտը, սակայն շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանների էական փոփոխություններ չպետք է լինեն:

Մեկից ավելի մասնակիցների հետ համաձայնագիր. Եթե համաձայնագրեր կնքված են մեկից ավելի մասնակիցների հետ, պետական պատվիրատուն ունի ընտրության հնարավորություն: Կա պայմանագրի շնորհման երկու եղանակ.

- կիրառելով շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանները՝ առանց մրցակցային ընթացակարգի անցկացման՝ պայմանագիրն ուղղակիորեն շնորհելով որոշակի մասնակցի, կամ

- Իրականացնելով լրացուցիչ մրցակցային ընթացակարգ՝ հրավիրելով համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին մասնակցելու ընթացակարգին:

Պետական պատվիրատուն, սահմանելով բազմաթիվ մասնակիցներով համաձայնագիրը, պետք է հստակեցնի, թե ինչպես պետք է շնորհի պայմանագիրը և շրջանակային համաձայնագիրը պետք է ներառի պայմանագրի շնորհման ձևն ընդգրկող դրույթներ: Երկու դեպքում էլ կողմերը ոչ մի դեպքում չեն կարող էական փոփոխություններ անել շրջանակային համաձայնագրում սահմանած պայմաններում և շնորհումը չպետք է արվի ոչ պատշաճ ձևով կամ այնպիսի եղանակով, որը կանխում, սահմանափակում կամ խախտում է մրցակցությունը:

- **Շնորհումը մասնակցին՝ առանց հետագա մրցակցության.** Եթե պետական պատվիրատուն ցանկանում է օգտագործել առաջին տարբերակը և պայմանագիրն ուղղակիորեն շնորհել համաձայնագիր կնքած մասնակիցներից մեկին, ապա այն կարող է այսպես վարվել շրջանակային համաձայնագրում սահմանած պայմաններով:
- **Մրցակցային շնորհում.** Պետական պատվիրատուն կարող է օգտագործել մրցակցային շնորհման երկրորդ տարբերակը, եթե շրջանակային համաձայնագրում ոչ բոլոր պայմաններն են սահմանված: Այս ընթացակարգը թույլատրում է ներկայացնել տեխնիկական առաջարկում նշված պայմանները կամ ավելի հստակ ձևակերպել գոյություն ունեցող պայմանները:

Համաձայնագրի՝ համապատասխան որակավորում ունեցող բոլոր մասնակիցները պետք է հրավիրվեն մասնակցելու գնման ընթացակարգին այս հիմքով, որպեսզի ապահովվի հավասար վերաբերմունքը, ոչ խտրականությունը և թափանցիկությունը: Հրահանգը սահմանում է մրցակցային ընթացակարգի անցկացման պահանջները:

Էլեկտրոնային աճուրդները

Հրահանգը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք խրախուսում են էլեկտրոնային գնումները, ներառյալ՝ էլեկտրոնային աճուրդների օգտագործումը: Էլեկտրոնային աճուրդներն ամբողջական մրցակցային գործընթացին հետևող, վերանայված վերջնական հայտերի հրավիրման մեթոդ են: Դրանք ներառում են առցանց էլեկտրոնային համակարգեր, որոնք օգտագործում են մասնակիցները՝ իրենց նոր գները և/կամ իրենց հայտերի այլ տարրերի վերանայումները ներկայացնելու՝ որոշակի պայմանագրի համար իրական ժամանակում և այլ մասնակիցների հետ ուղղակի մրցակցության մեջ:

Պետական պատվիրատուն կարող է օգտագործել նշվածը, եթե տեխնիկական առաջարկները կարող են սահմանվել բավարար հստակությամբ: Նրանց թույլատրված չէ օգտագործել էլեկտրոնային աճուրդները որոշակի ծառայությունների պայմանագրերի և որոշակի աշխատանքների պայմանագրերի համար, որոնց առարկան է մտավոր գործունեությունը, ինչպիսիք են օրինակ, շինությունների նախագծումը:

Կան գնումներ, որոնց կտարման դեպքում չեն կիրառվում էլեկտրոնային աճուրդները: Օրինակ այն գնումները, որոնց շրջանակում կարիքները պետք է բավարարվեն համակցված: Պետական պատվիրատուն պետք է որոշի էլեկտրոնային աճուրդների համապատասխան օգտագործման նպատակահարմարությունը: Օրինակ, թղթի մատակարարման պայմանագիրը, երբ թղթի տեսակը և որակը կարելի է հեշտությամբ նշել և եթե շուկայում կա մրցակցության լավ մակարդակ, հարմար կլինի էլեկտրոնային աճուրդի կիրառումը: Բժշկական սարքավորումների համակցության ձեռքբերման համար պայմանագիրը, եթե առկա է մի քանի արտադրանք, բոլորն էլ մի փոքր տարբեր բնութագրերով, և երբ կան ծառայության մատուցման խնդիրներ, աննպատակահարմար է էլեկտրոնային աճուրդի կիրառումը:

Մրցակցային գործընթացի ուժի փուլում է տեղի ունենում էլեկտրոնային աճուրդը:

Էլեկտրոնային աճուրդը մրցակցային գործընթացի վերջին փուլն է և կարող է օգտագործվել, երբ պետական պատվիրատուն կիրառել է.

- բաց ընթացակարգ՝ մասնակիցներ ընտրելու և հայտեր ստանալու համար,
- սահմանափակ ընթացակարգ՝ մասնակիցներ ընտրելու և հայտեր ստանալու համար,
- հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ՝, այն դեպքում, երբ նախկին բաց կամ սահմանափակ ընթացակարգերը հայտերերվել են չկայացած:

Էլեկտրոնային աճուրդը կարող է նաև օգտագործվել շրջանակային համաձայնագրի և գնումների դինամիկ համակարգի ներքո:

Բոլոր դեպքերում էլեկտրոնային աճուրդ իրականացնելու համար պետական պատվիրատուն պետք է պայմանագրի սկզբնական ծանուցման մեջ նշի, որ այն մտադիր է օգտագործել էլեկտրոնային աճուրդը: Պետական պատվիրատուն ստանում է սկզբնական հայտերը և իրականացնում է հայտերի ամբողջական գնահատում՝ մինչև էլեկտրոնային աճուրդին անցնելը: Այդ գնահատումը պետք է իրականացվի շնորհման նախասահմանված չափորոշիչի կամ չափորոշիչների և կշռումների համաձայն:

Էլեկտրոնային աճուրդն օգտագործվում է սկզբնական հայտերի ստացումից և գնահատումից հետո՝ նոր գներ հայցելու համար՝ վերանայված դեպի նվազումը: Եթե պայմանագիրը շնորհվել է տնտեսապես ամենաշահավետ հայտին, գործընթացը կարող է նաև կիրառվել գնից բացի ոչ գնային այլ չափորոշիչները բարելավելու համար:

Ինչ գործոններ կարող է գնահատել պետական պատվիրատուն էլեկտրոնային աճուրդում:

Էլեկտրոնային աճուրդները կարող են հիմնվել.

- կա՛մ վերանայված գների ներկայացման վրա, այն դեպքում, երբ պայմանագիրը շնորհվել է ամենացածր գնի հիման վրա,
- կա՛մ գների և/կամ տեխնիկական առաջարկում նշված հատկանիշների նոր արժեքների վրա, եթե պայմանագիրը շնորհվել է տնտեսապես ամենաշահավետ հայտի հիման վրա:

Կա՞ն արդյոք կանոններ, որոնք վերաբերում են էլեկտրոնային աճուրդի իրականացմանը:

Այո, կան մանրամասն կանոններ, որոնք վերաբերում են էլեկտրոնային աճուրդի իրականացմանը և դրանք սահմանված են Հրահանգում: Առանձնապես կարևոր պահանջներն են.

- Բոլոր մասնակիցները, որոնք ներկայացրել են ընդունելի առաջարկներ, պետք է հրավիրվեն մասնակցելու էլեկտրոնային աճուրդին:
- Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցները պետք է հրավիրվեն ներկայացնելու նոր գներ և/կամ արժեքներ գուգահեռաբար, էլեկտրոնային եղանակով:
- Մասնակիցը չպետք է բացահայտվի էլեկտրոնային աճուրդի իրականացումից առաջ կամ դրա ընթացքում:
- Հրավերը պետք է ներառի հատուկ տեղեկատվություն, որը վերաբերում է հատկանիշներին, որոնք ենթակա կլլին են էլեկտրոնային աճուրդին և էլեկտրոնային աճուրդի գործընթացի իրականացմանը, ներառյալ՝ էլեկտրոնային սարքավորումների տեսակները, որոնք պետք է օգտագործվեն:
- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու հրավերը պետք է պարունակի հատուկ թվարկված տեղեկատվություն, որը վերաբերում է գործընթացի իրականացմանը: Երբ պայմանագիրը պետք է շնորհվի տնտեսապես ամենաշահավետ հայտի հիման վրա, ապա յուրաքանչյուր մասնակից ստանում է տեղեկատվություն իր սեփական հայտի մասին, բայց ոչ մյուսների հայտերի մասին:
- Էլեկտրոնային աճուրդը կարող է իրականացվել հաջորդական փուլերով և աճուրդին մասնակցելու հրավերը պետք է ներառի ժամանակացույց՝ աճուրդի յուրաքանչյուր փուլի համար:
- Էլեկտրոնային աճուրդի յուրաքանչյուր փուլի ընթացքում պետական պատվիրատուից պահանջվում է անմիջապես հաղորդել բոլոր մասնակիցներին այն տեղեկատվությունը, որն առնվազն բավարար է՝ նրանց հնարավորություն տալու ճշտելու իրենց հարաբերական դիրքը ցանկացած պահին:

Ինչպե՞ս է պետական պատվիրատուն փակում էլեկտրոնային աճուրդը և շնորհում պայմանագիրը:

: Պետական պատվիրատուն ունի ընտրության հնարավորություն առ այն, թե ինչպես փակել աճուրդի գործընթացը: Այն կարող է փակել աճուրդը:

- Աճուրդին մասնակցելու հրավերի մեջ նախապես նշված ամսաթվին և ժամին:
- Երբ այն չի ստանում նախապես սահմանված ժամկետում նոր գներ կամ նոր արժեքներ (որոնք բավարարում են նվազագույն տարբերություններին վերաբերող պահանջները): Ժամանակը, որը սահմանված է որպես ժամանակ, որը պետք է ընկած լինի վերջին նոր գնի կամ նոր արժեքի ստացման և աճուրդի փակման միջև, պետք է նշված լինի աճուրդին մասնակցելու հրավերի մեջ:
- Եթե աճուրդում փուլերի քանակը, ինչպես նշված է աճուրդին մասնակցելու հրավերի մեջ, ավարտվել է: Եթե փուլերը պետք է ավարտվեն՝ վերջին նոր գնի և/կամ նոր արժեքի ստացման և աճուրդի փակման միջև ընկած ժամկետի անցնելուց հետո, ժամանակացույցը պետք է նշվի աճուրդին մասնակցելու հրավերի մեջ:

Պայմանագիրը շնորհվում է էլեկտրոնային աճուրդի փակումից հետո և այդ աճուրդի արդյունքների հիման վրա:

Գնումների դինամիկ համակարգեր

Գնումների դինամիկ համակարգը ամբողջապես էլեկտրոնային համակարգ է, որը կարող է օգտագործվել կրկնվող ստանդարտացված գնումների համար: Գնումների դինամիկ համակարգը գործարկվում է ավելի շատ որպես ուղիղ միացմամբ առցանց, ինտերնետի վրա հիմնված ցուցակ, որին մասնակիցները կարող են միանալ ցանկացած ժամանակ:

Պետական պատվիրատուն գովազդում է համակարգը՝ օգտագործելով բաց ընթացակարգը: Շահագրգիռ մասնակիցները այնուհետև ներկայացնում են ցուցադրական հայտեր, որոնք սահմանում են պայմանները, որոնցով նրանք կբավարարեն սահմանված պահանջներին: Համապատասխան որակավորում ունեցող բոլոր մասնակիցները, որոնք ներկայացրել են համապատասխան ցուցադրական հայտեր, գրանցվում են համակարգ: Նոր մասնակիցները կարող են դիմել՝ մասնակցելու և ներկայացնելու ցուցադրական հայտեր՝ գնումների դինամիկ համակարգի գործողության ընթացքում: Բոլոր մասնակիցները կարող են նաև թարմացնել իրենց ցուցադրական հայտերը ցանկացած ժամանակ, բարելավել դրանք և այն ամբողջ տեղեկատվությունը, որը պահվում է էլեկտրոնային եղանակով:

Պետական պատվիրատուն, որը ցանկանում է կիրառել համակարգը, պետք է հրավիրի համակարգում գրանցված բոլոր մասնակիցներին, ինչպես նաև հայտարարություն հրապարակի Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում: Սա հնարավորություն է տալիս համակարգում չընդգրկված մասնակիցներին մասնակցելու գնման գործընթացին: Պետական պատվիրատուն այնուհետև որոշում է հաղթողին:

Երբ գնումների դինամիկ համակարգի ներքո գնումների նախահաշվային արժեքը գերազանցում է համապատասխան շեմը, այդ համակարգի ստեղծման և գործարկման նկատմամբ կիրառվում է Հրահանգը:

Ի՞նչ տեսակի գնումներն են հարմար:

Գնումների դինամիկ համակարգի սահմանումը պարզ է դարձնում, որ այն նպատակաուղղված է միայն “հաճախակի օգտագործվող գնումների համար” և այդ գնումներին անդրադառնում է որպես “շուկայում հիմնականում առկա”: Գնումների դինամիկ համակարգերը հիմնականում հարմար են միայն ապրանքային տեսակի գնումների համար, երբ կա ակտիվ շուկա ստանդարտ պայմաններով:

Ինչպե՞ս է ստեղծվում գնումների դինամիկ համակարգը և ինչպե՞ս է այն գործարկվում:

Գնումների դինամիկ համակարգ ստեղծելու համար պետական պատվիրատուն պետք է ունենա էլեկտրոնային՝ ինտերնետի վրա հիմնված համակարգ: Պետական պատվիրատուն պետք է հետևի բաց ընթացակարգի կանոններին դրա բոլոր փուլերում՝ մինչև համակարգի ներքո կնքվող պայմանագրի շնորհումը: Պետական պատվիրատուն սկսում է գործընթացը՝ պահանջվող ձևաչափով համակարգի ստեղծման համար պայմանագրի ծանուցման ստանդարտ ձևաթղթի հրապարակմամբ:

Պետական պատվիրատուն պետք է մասնագրի մեջ ներառի հետևյալ մանրամասները.

- նախատեսված գնումների բնույթը,
- էլեկտրոնային գնումների համակարգին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունները,
- Օգտագործվող էլեկտրոնային սարքավորումները, տեխնիկական կապերը և մասնակցները:

Պետական պատվիրատուն պետք է ապահովի տեխնիկական առաջարկի և ցանկացած լրացուցիչ փաստաթղթերի անսահմանափակ, ուղղակի և լրիվ հասանելիություն և պայմանագրի ծանուցման մեջ պետք է նշի համացանցային հասցեն, որտեղ կարելի է գտնել այս փաստաթղթերը: Տեխնիկական առաջարկի և լրացուցիչ փաստաթղթերի հասանելիության այս պահանջը կիրառվում է պայմանագրի ծանուցման օրից և գնումների դինամիկ համակարգի ընթացքում:

Պետական պատվիրատուն գնահատում է մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը: Մասնակիցները, որոնց թույլատրված է միանալ գնումների դինամիկ համակարգին նրանք են, որոնք (1) բավարարել են ընտրության չափորոշիչները և (2) ներկայացրել են ցուցադրական հայտ, որը համապատասխանում է տեխնիկական առաջարկի և ցանկացած լրացուցիչ փաստաթղթերին:

Համակարգի գործարկումը: Գնումների դինամիկ համակարգը չի կարող տևել ավելի, քան չորս տարի՝ բացառությամբ պատշաճ կերպով արդարացված բացառիկ դեպքերի: Պետական պատվիրատուին թույլատրված չէ պահանջել որևէ վճար այն մասնակիցներից, որոնք ցանկանում են միանալ կամ միացել են համակարգին:

Բոլոր փաստաթղթերը պետք է հասանելի լինեն անվճար և որևէ վճար չպետք է գանձվի վարչական կամ այլ ծախսերի համար:

Ի տարբերություն շրջանակային համաձայնագրերի, որտեղ գրանցումը հաստատուն է, երբ ստեղծվում է շրջանակային համաձայնագիրը, գնումների դինամիկ համակարգի ներքո նոր մասնակիցները կարող են դիմել՝ միանալու համակարգին ցանկացած ժամանակ: Նոր մասնակիցները կարող են տեղեկանալ տեխնիկական առաջարկներին և լրացուցիչ փաստաթղթերին ցանկացած ժամանակ՝ պայմանագրի ծանուցման մեջ նշված հասցեում և նրանք իրավունք ունեն ներկայացնել ցուցադրական հայտ, որը հիմնականում պետք է գնահատվի ներկայացումից տասնհինգ օրվա ընթացքում: Գրանցված մասնակիցները նույնպես իրավունք ունեն բարելավել իրենց ցուցադրական հայտերը ցանկացած ժամանակ:

Պայմանագրի շնորհումը: Յուրաքանչյուր պայմանագիր, որը պետական պատվիրատուն ցանկանում է շնորհել գնումների դինամիկ համակարգի շրջանակում, պետք է լինի գնման առանձին հրավերի առարկա, որը հայտարարվում է Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում՝ օգտագործելով որպես պայմանագրի պարզեցված ծանուցում: Հետագա գործընթացը և շնորհումը պետք է իրականացվի Հրահանգում սահմանված մանրամասն դրույթների համաձայն:

Կոմունալ ծառայությունների կազմակերպություններ

Որակավորման համակարգեր. Կոմունալ ծառայությունների կազմակերպությունները ևս կարող են ստեղծել և գործարկել որակավորման համակարգեր:

Որակավորման համակարգը ճկուն համակարգ է, որում կոմունալ ծառայության կազմակերպության հետ պայմանագիր կնքելու մեջ շահագրգռված մասնակիցները կարող են դիմել՝ գրանցվելու որպես հնարավոր մասնակից: Կոմունալ ծառայության կազմակերպությունը, այնուհետև, համակարգում գրանցում է այս մասնակիցներից մի քանիսին կամ բոլորին: Գրանցված մասնակիցները շ կազմում են մեկ միասնություն, որից կոմունալ ծառայության կազմակերպությունը կարող է ընտրել այն մասնակիցներին, որոնք հրավիրվում են հայտ ներկայացնելու կամ պայմանագրի վերաբերյալ բանակցելու:

Հետագա ընթերցանություն.

[SIGMA Public Procurement Training Manual](#)